

ԿՆՃՌՈՏ ԽՆԴԻՐՆԵՐ

Ուշ սկսանք, բայց անուշ սկսանք:

Երկուշաբթիէն ի վեր խլացուցիչ աղմուկ մը կը տիրէ շուրջերնիս: Ամէն թաղ, ամէն գիւղ իր Յորելեանական հանդէսը կազմակերպելու վրայ է: Ծրագիրներ, յայտարարութիւններ, առաջարկներ, կոչեք կը տեղան ամէն կողմէ:

Մասնատոճոյններ գիշեր ցերեկ նիստ կը գումարեն վերջնական կարգադրութիւնները ընելու համար: Ամենափոքր մանրամասնութիւններու համար բուռն վիճարանութիւններ կը մղուին անորինակ խանդավառութեամբ մը:

Նոյնիակ զբոսարաններու, հանրային վայրերու, Թոսմալային ու շոգենաւին մէջ ուրիշ խօսք չի կայ:

Երէկ այդ տեսակ վիճարանութեան մը ներկայ գտնուեցայ Վաստիսէն իջնող շոգենաւի մը մէջ: Վիճողները գիւղի մը Յորելեանական Յանձնատոճոյնի անդամներն էին:

— Քանի որ հանդէսը քաղինօյին մէջ տեղի պիտի ունենայ և երաժշտութիւն պիտի ըլլայ՝ պար ալ ըլլալու է, գիտել տուաւ մին:

— Պարը անկարելի է, վճռեց ուրիշ մը:

— Ինչո՞ւ համար:

— Ս. Սահակի և Ս. Մեսրոպի յիշատակը սուրբ պէտք է պահենք:

— Բայց մենք այդ Սուրբերուն մահուան յիշատակը չենք տօներ կոր:

— Քանի որ առտուն հոգեհանգիստ պիտի ըլլայ, ըսել է սուգի օր մըն է մեզի համար:

— Ընդհակառակը յաղթանակի և ուրախութեան օր մըն է և Դաւիթ մարգարէն այդ տեսակ պարագաներուն թէ՛ կը նուագէր և թէ՛ կը պարէր:

— Դաւիթ մարգարէն մեզի օրինակ չենք կրնար առնել, այս տօնը զուտ Հայկական է:

— Ուրեմն մենք ալ Հայկական պարեր կը խաղանք:

— Անկարելի է, պարը անպատշաճ է:

— Էֆէնտիմ քանի որ պիտի երգենք՝ ինչո՞ւ չպարենք:

— Ատ խօսք է, եկեղեցիին մէջ ալ կ'երգենք՝ բայց չենք պարեր:

— Պար չըլլայ նէ՛ ես կը հրատարիմ յանձնատոճոյնի անդամակցութենէն:

— Եթէ պար պիտի ըլլայ, ես գործ չունիմ Յանձնատոճոյնին մէջ:

Եւ այսպէս վիճարանութիւնը շարունակուեցաւ առանց եզրակացութեան մը յանգելու: